




ԷՌ Արարատյաց ստորոտն ձգողող Երասխիայ դաշտավայրին զիսաւոր երկու կէտերն են Երիւան, Համանուն կուսակալութեան մայրաքաղաքն, եւ Եջմիածին, Հայոց Կաթողիկոսին աթոռանիստը Երիւան, Երասխիայ գաշտին հիսախային եզերքը, եւ գլսաւոր երկու յիշատակարանաց, այս Է Արտօնրի Պալատին աւերակացն եւ գէպ ի նախագաւիթը բացուող լայնակամուր գլսաւոր մէկթին պատճառաւ բոլորովին պարսկական նկարագիր ունի: Երիւանէ տասնեւութ վիրտ հեռու է Եջմիածին: այս ճամբան չըս ժամէ կը հասցընէ անսպատ մը, որուն հօրիզոնը միայն ի հարաւոյ բարձրացող Արարատյաց ձիւնաթաղ գագաթը կ'ընդմիջէ: Էմէն կոյմ թուխ աւազյ գաշտ մաշաց առջւէ կ'ելլէ, եւ վերը հրատապ տոշորիչ երկինք մը: Մերթ ընդմերթ այս անսպատը կ'ընդհատեն ովախմներ, գեղօրայք, զօրոնիք կը հովանաւորեն ցարասիք եւ եւկաղիսաներ, Երարատէն բղևող եւ Երասխ խառնուող առուակաց եղելքը: Էսէն ետեւ գարձեալ անսպատ կը յաջորդէ: Ա Երջափէս հարաւ-արեւմտեան հորիզոնին վրայ գալարագյն կանաչութեան մէջն վեր բարձրացած կ'երեւան երեք զանգակատուն՝ Իշ-+էլիսէ ըստ Տաճկաց, այսինքն՝ Երեք-Լեկուղեցիք կոչուած: Կանցնինք Ա. Հռիփսիմեայ եկեղեցոյն քովին, Վաղարշապատու երկայն պողոտայն կ'երթանք կառօք, եւ կը հասնինք վերշապէս գեղին միւս ծայրը՝ Եջմիածին Կաթոռկիոսական Վանաց բարձր պարսպորմը, որուն արեւմտեան կողմն, շուկային գիմաց, կը բացուի աւագ դուռը:

Ար մասնենք ընդարձակ նախագաւիթ մը (C), կը դիմենք շնչիքին ձախակողմեան շարքին մէջ գտնուող անցք մը, որ “Դուռն Տրդասայ, կը կոչուի (F), եւ փողանցքի մը մէջէն (24) կը նշմարենք Մայր Եկեղեցին, Հայուն ազգային սրբավայրը: Եյս եկեղեցին յատկապէս “Լ. Հմիածին”, կը կոչուի, այսինքն Լ. Հ. Ք Սիածնին, վասն զի ըստ վկայաբանական աւանդութեան” Ո. Գրիգոր Առաւողիի, Հայոց առաքեալն, այս աեղ տհասա “զայրն ահաւոր,, որ կիշնար: Եկեղեցին կը շըսապատեն ձախ կողմէն՝ Ո. Կիարանից բնա-



ՑԱՏԱԿԱԳԻՒԹ ՎԱՆԱԾ ՀՀՄԻԱՅԻՆԻ


1. Եկեղեցի: 2. Կաթողիկոսին բնակարան: 3. Միաբանից սենեակներ: 4. Հմեն տպարան: 5. Սինոդի գիւղանատունը: 6. Մատենակարան: 7. Ճաշկարան: 8. Տապան: 9. Մթերանոց: 10. Փուռ կամ հացարան: 11. Գուղանոց: 12. Խցիւնք: 13. Ջախառոց տուն: 14. Խօհանոց: 15. Մթերանոց: 16. Մարգար: 17. Շահմարան ցորենիք: 18. Շահապահ: 19. Աւազան: 20. Անուներ ևս մասներ: 21. Բաղիք: 22. Շահկան: 23. Ջրամբարք ևս ջրհոր: 24. Փողացք: 25. MacDonald գեղապետին մաշարանը: Ա. Պազարապատ: Բ. Գումանան: Ը. Նախակալիթ: Ը. Շահկայ գուռք: Ե. Պազարապատի գուռք: Օ. Մորի-Գուռք: Զ. Կալի-Գուռք: Ը. Բաղանեաց գուռք: Է. Գուռք Տրդասայ:

կարանները (12), աչէն Անդանատունը (7), Գրան կողմը՝ Կաթողիկոսին բնակարանը (2), իսկ եկեղեցւոյն յետակողման գաւիթը կը փակէ շնչիքերու չորրորդ շարք մը, որուն ետեւը նախ Գումանատանք (B), եւ ապա նորաշէն Շեմարանը կը բարձրանան: <sup>1</sup> Ամբողջ էն զիրքը բիւզամբեան վանքերու յատուկ յատկապիծն ունի, որուն համեմատ

<sup>1</sup> Պատկեր, որուն վայ մէմարանը չկայ, առհուած է. M. Brosset, Rapport sur un voyage archéologique dans la Géorgie etc. exécuté en 1847—1848. St. Pétersbourg 1851. Տախասկ ԺԴ: Դարձեալ Ակւմ: Այսաւա, վ. նետ. 1890, էլ 216. Եռաբառոդ թաւակէտ (կ վօլ օiseau, Vogelperspektiv) նկարուած է 1672ին ի գիրս Voyage du Chevalier Chardin en Perse Amsterdam 1735, I, pl. IX.

մայր եկեղեցին կամ “Կաթոլիկէն, (καθολικόν) քառակուսի գաւթի մը մէջաեղն կը կինայ, զոր ամէն կողմանէ շնչքեր կը պատեն, որ են վանականաց բնակարանք, ճաշան, ուխտաւորաց սենեաիներ եւայլն։<sup>1</sup>

Եջմանի հիմնարկու կը համարուի նոյն իսկ բնքն Ա. Գրիգոր Լուսաւորիչ։ Բառ  
աւանդութեան՝ Տրդատաց դարձէն ետքը արդէն 302ին եկեղեցւոյ հիմնաքարը դրաւ այն



ՑԱՏԱԿԱՒԹ ԿԱԹՈՂԻԿԷՆԻ ԷՃՄԻԱՅԻՆ

տեղն, ուր արքունի պալատան քով Արտեմեայ գլխաւոր մէշեանը կանգնած էր, եւ ուր  
Միածինն երեւեցաւ իրեն։<sup>2</sup> Եսոյ պատմառաւ արդի շինուածքին վկայ, որ յայտնապէս  
նոր շինութիւն է ըստ էական մասանց, այս հնագոյն հիմնարկութեան մնացորդները գտնել

<sup>1</sup> Արեան Լուսաւ, Խիթրն, Աստոպեդի, Ռուսիկն, Քաննոփու և Կուտյումնութու Ա. անաց նման մէն վանքեր Ամեն լիբան։ Ա. Սարգսի Մասկուայի քով, ևս այլ նման մէն վանքեր Պաքետ (Հայոցնեց) եկեղեցւոյ մահց գիւղ գութին մէջ կը փոխադրեն։ Յաւելուած է գիւղ Յ. Schlosser, Die abendländischen Klosteranlagen des früheren Mittelalters, Wien, 1890, 8 28.

<sup>2</sup> C. Ritter, Erdkunde, X, S. 528.

ջանացած են ունկնք, որոնց մեջ ամէնէն յառաջագիմ եղաւ Տիւպուա<sup>1</sup> Այս զիտոնականը չէ թէ միայն միւս ճանապարհորդաց պէս յանձն առած է հիմնական որմունքն այն հնագոյնները կարծելու, այլ եւ հնագոյն եկեղեցին վերակազմելու ջանացած է,<sup>2</sup> որ բոլորին կամայական է, ինչպէս նաև այն հետեւութիւնը թէ, որովհետեւ ի բովանդակ հայս միայն ասոր վրայ յունական ազգեցութիւն կը կարծէ տեսնել, այս շնչքը Տրդառայ ժամանակի նախնական շինութենէն ըլլայ, որ Հռոմ մաս ըլլալով հոռոմէական շինութեան ձեւեր մուծանելու ջանացած է կըսէ:<sup>3</sup>

Վրաուկուսի ձեւով է եկեղեցւոյն յառակագիծը,<sup>4</sup> բայց ամէն կողմն դուրս կարկառուած բազմանկիւն կողակիներով (apside), որոնց պարեւելակողմանն ամէնէն քիչ գուրս ցցուած է, վասն զի երկու կողմերէն ալ ուղղանկիւնի մասուռուներով պատսպարուած է: Այս կենդրունական, թուխ լաւայի թիկորներէ շինուած արտաքին պարսպորմին կը համապատասխանէ ներքին շնչքը: Չորս մոյթեր կը վերցընեն գլեթերը, եւ հաւասարաթեւ խաչաձեւի մը ըսրս անկիւնները կեցած են, որոնց վրայ առանցքներու ուղղութեամբ հովանաւոր կամարներ ձգուած են, իսկ անկիւնամսանց վրայ՝ խաչականարները: Եւ այսպէս բովանդակ յատակագիծն՝ ի բաց առեւլ հիւմիսակորզան, հարաւակողման եւ արեւմասեան կողակաց<sup>5</sup> բնիկ հայկական ձեւը բոլորովին համեմատ է բի զանդական գմբէթաւոր եկեղեցեաց առանձին կաղապարին, որ Յաւսախնիանու ժամանակ սկսաւ գործածուիլ:

Բայց այս յատակագիծն՝ որ հաւանականագոյն հնագոյն շինուածքէ մնացած է, չէ վերպերի արեւմասեան կողմը կարմիր պորփիրանան քարէ շինուած զանգակատունը, որ 1654ին շինուած աւելցուած է: Կամ եկեղեցւոյն հիմնէն վեր եղած շինուածքը նոր է բոլորովին: Վասն զի Հայ Աբաս 1604ին եկեղեցին ու վանքը կործանեց եւ վիտակները Մպահանու մերձակայ Քուղա ասքարա՝ որ նոր եկեղեցի մը շինուի: Մովսէս վարդապետ, որ ետքէն կաթողիկոս եղաւ, նորուց 1627ին աւերակները: Խը յաջորդը Փիլիպպոս շաբունակեց գործը, զօր 1682ին լրացուց Լշիազար կաթողիկոս: Այս ժամանակին եւոք դյոյն փոփոխութիւնք միայն եղած են:<sup>6</sup>

Վագրգիւն մնաց իմ շննքս հնագոյն քրիստոնէութեան դարերէն անկամ բնիկ հայ գեղարուեստական յիշասակարաններ գտնելու հոս: Ընդհակառակն քանի մը նշաբաններ գտայ յունական արձանագրութեամբ եւ արուեստով, որ իրենց նկարագրին պատճառաւայս ժամանակին են, եւ որոնք գրոց մարմնոյն մեջ հետազոտելի Աշմիածնի Աւետարանին հետ մէկտեղ պայծառ լոյս մը կը սփռեն այն աղքերաց վրայ, որոնցմէ բղիսած զարգացած է քրիստոնեաց Հայոց քաղաքակրթութիւնը:

(Մատեուք հաւ անբար)

<sup>1</sup> Dubois de Montpréoux, Voyage autour du Caucase. Paris 1839, III, S. 371.

<sup>2</sup> Անդ. Տախոսակը, Չար. Գ, տախոսակ. կ, նկար 1:

<sup>3</sup> Այս գեղինի կործածաց հիմն է Գառակի աւերակները, որոնք յոհական տաճարի մը թացորդն են: Հայ կըսուի թէ Տրդառ իւր քեւ համար պալատ մը շննեց: Պատփերը հմտու: Dubois, Atlas Sér. III, pl. VII եւ Աւետարան, անդ. էջ 264:

<sup>4</sup> Սառերակի մը հրատարակեց Նախ Chardin, անդ. I, թ. X. Աւետի լու: է Dubois, Atlas III, pl. VII, fig. 3; Brosset, անդ. Atlas, pl. XVI, որի պատճ եմ Նկարը: Հմտու: Նախ Grimm, Monuments d'arch. en Géorgie etc. Petersbourg, 1859 մ. էւ Անդան, անդ. էջ 217:

<sup>5</sup> Հայ մէն. Schnasse, Geschichte der bild. Künste, 2. Aufl. III, S. 327:

<sup>6</sup> Բայց Dubois, անդ. III, p. 371; Grimm, անդ. էջ 9: Ritter, Erdkunde, X, S. 530. Հայ մէն. Շահնշահանաց, Ստորագրութիւն էջմիածնի եւ հինգ գաւառաց: Էջմիածնի, 1842, երկու հատոր: